ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

—

Մայիսի, 12-ին

Ղարսի վիճակի գիւղերը, որ մինչև վերջին պատերազմի ժամանակ ենթարկված էին տաճկաց բռնակալութեանը, մինչև կոկորդը թաղված էին տգիտութեան ցեխի մէջ, քնած էին մահաբեր քընով։ Այս ողորմելի ժողովուրդը մինչև այսօր եղել է կատարեալ ստրուկ, անպայման գերի։ Նա ամեն մի տաճկի կեղտոտ պաշտօնեային հլու հըպատակ է եղել և ճշդութեամբ կատարել նրա ամեն մի լիրբ առաջարկութիւնն անգամ։ Այժմ, այս թշուառները ազատվել են այդ բարբարոսութիւններից և մի փոքր ազատ շունչ են քաշում։ Այժմ հարկաւոր է այս հալածվածներին մխիթարել, փայփայել և կամաց կամաց դուրս քաշել տգիտութեան խաւարից։—Բայց ով պիտի կատարէ այդ անհրաժեշտ հարկաւորութիւնը։ Գլխաւոր պարտականութիւնը ուղղակի ընկնում է ս. Էջմիածնի վրա։ Բայց ցաւօք սրտի խոստովանվում եմ, որ Էջմիածինը խորթ մօր աչքերով է նայում իր նոր գտնված զաւակների վրա, ինչպէս վկայում են հետևեալ դառն ճշմարտութիւնները, որոնք դուրս եմ բերել պաշտօնական մատեաններից, ժողովների արձանագրութիւններից և վերջապէս իմ աչքերի տեսածներից։ Շիրակայ մի յետընկած անկիւնում փալտրվան գիւղացի այրի Տէր-Ստեփանը, չը գիտենք որտեղ, ինչ միջոցներով, ի տարաբախտութիւն համայն ազգութեան, դառած է Ստեփան վարդապետ, որ բացի իր անունը ստորագրելուց էլ ուրիշ ոչինչ չը գիտէ։ Բայց զէնք կրելու, կատաղի նժոյգի վրա բազմած եասաուլը ետևից դցած շրջելու, աւազակներ հալածելու, սրա նրա վրա սուր շարժելու մէջ գերազանց է։ Եթէ գըտնես Շիրակում տգէտ քահանաներ և անպէտք տիրացուներ, առաջինը և վերջինը Ստեփան վարդապետն է։ Եթէ այս աբեղայի մօտ խօսես լրագրութեան, հայի, Հայաստանի, Վանի և դրուս ներկայ պահանջների մասին, քարից փայտից կարծիք կը լսես, սրանից՝ երբէք։ Իսկ եթէ խօսակցութիւնը չուռ տաս առակների, մասալների, գեղեցիկ սեռի, կռիւների և այլ սրանց նըման զուարճալի բաների վրա, այն ժամանակ Ստեփան վարդապետը իր ասախօսութեան և զուարճախօսութեան պարկերի բերանները բաց կանի, ջրաղացի քարի նման պտոյտ կը տայ և այնքան կը ծիծաղեցնի իր գլխին հաւաքված ռամիկ ամբոխին, որ բոլորը կը թուլանան։ Պատերազմի այն խառն ժամանակ, երբ երկրում չունը տիրօջ չէր ճանաչում, այս վարդապետը ինքնագլուխ մտնում է Հօռոմոսի վանքը որպէս վանահայր և սուրը քաշելով յարձակվում է ալէքսանդրապօլցի Ներսէս վարդապետի վրա, որ այդտեղ վանահայր է լինում այդ ժամանակ, ուզում է նրան վանքից արտաքսել, որպէս զի աւելի ազատ տիրէ վանքի առատ եկամուտների վրա։ Ներսէս վարդապետը, վազուց լսած լինելով Ս. վարդապետի սրի քաջագործութիւնները, փախչում է վանքից և բողոքում է Ղարսի ազգային ժողովին, որի արձանագրութիւնից երևում է որ Ս. վարդապետը բացատրել է «սուրը քաշել է ոչ թէ Ն. վարդապետին սպանելու, այլ միայն ականջը կտրելու և վախեցնելու»։ Պատերազմի պատճառով Ղարսի և Հօռոմոսի վանքի յարաբերութիւնները կտրվում են և Ղարսի առաջնորդը միջոց չէ ունենում հակել ինքնագլուխ վանահօր վրա, որ, հանդամանքից օգուտ քաղելով, դառնում է բոլոր գիւղերի վրա և անկախ առաջնորդ։ Ստորագրում է պաշտօնական թղթերի տակ «առաջնորդ Ստեփան վարդապետ Շիրակունի»։ Վանքի բոլոր իրաւունքները հաւաքում է իր բռի մէջ. հաւաքում է առաջնորդական հասոյթներ՝ իւղ, պանիր, արմատեղէններ և այլն։ Առաջնորդական հրամաններ (այսպիսի թղթերից մի քանիսը ուղարկված է Սինոդին) արձակում է քահանայից, գործակալաց վրա, որոնք բոլորը դողում են սրա սրից։ 1876 թվից մինչև 1879 թիւը (վերջին տարին Սինոդից վանահայրութեան իրաւունք է ստացվում) այդ յետին աղքատ վարդապետը վանքի առատ եկամուտներով այնքան է առաջ գնում որ, ինչպէս ժողովուրդը ասում է, փողի հետ չամչի պէս խաղում է։ Առնում է թանգագին նժոյգ, կարկատած չորերին փոխարինում են փառաւոր հագնելիքներ և գեղեցիկ մուշտակ։ Առատ օժիտով մարդու է տալիս իր աղջիկը և վերջապէս ապահովացնում իր աղքատ հարսին ու որդուն, որոնք հազիւ հաց ապրելիս են եղել։

1879 թվին Ղարսի առաջնորդ Գ. եպիսկ. Աղուանեանցը Սինոդի տուած հրահանգին համաձայն գնում է այդ վանքը Ս. վարդապետի 3 տարվայ վանահայրութեան հաշիւները քննելու, որի իսկական պատկերը հետևեալն է։

1) Ծախուց տումարի 35-երորդ էջում գրված է, «առնվեցաւ վանքի համար երկու դ. մէշ (երկու տարեկան են) 56 բուբլով»։ Բայց դ. մէշ ծախողները անձամբ ներկայացել են քննութեան և Ս. վարդապետի երեսին հաստատել է որ գոմէշները իրանք ծախել են 31 բուբլիով, և ոչ թէ 56 ր.։

2) «Վան չինութեան երկու նստարանաց աշակերտաց (ոչ վարժապետ է եղել, ոչ աշակերտ) տրվեցաւ 30 ր.—40 կ.»։ Բայց նստարան չինող վարպետը անձամբ ներկայացել է քննութեան և Ս. վարդապետի երեսին հաստատել է իրա հոգու խաթեր, տախտակը վանքից, բայց վին ձրի չինել է առանց մի կոպէկ ստանալու. միայն 40 կոպէկի մեխ է գնացել։

3) 78 թվի ծախուց տումարում գրված է, «Վան Սամավարի տրվեցաւ 18 ր.»։ Բայց բոլոր գիւղացիք և վանքի միաբանութիւնը հաստատում են որ «Ս. վարդապետից շատ առաջ այդ սամավարը վանքում կար, նոր չէ առնված....»

4) Առատ առատ գրուած է «դարձեալ չաքար այսքան բուբլու, դարձեալ չայ, դարձեալ բըրինձ..... բայց յայտնի չէ երբ, որքան որտեղից։ Բացի դրանից միաբանութիւնը բողոքում է թէ մենք այդպիսի բաների երես չենք տեսել։—Քննութեան տակ ստորագրել են մի քանի պատուաւոր քահանաներ և ուրիշներ, և որի պատճէնը ուղարկված է Սինոդին։—

Շատ երկար կը լինէր քննութեան բոլոր պատճէնը այստեղ արտագրելը, եթէ ոչ ուրախութեամբ կը դնէի մի բանի զուարճալի կտորներ էլ։—Ծախուց տումարը քննելուց յետոյ, ձեռք են առնում մտից տումարները, որտեղ ոչընչից ոչինչ չէ լինում, բացի այն ուխտաւորների նուէրներից, որոնք իրանք իրանց ձեռքով ստորագրել են մատեանում։ Բոլոր ներկայ եղողները, որոնց կարծիքով վանքը այդ տարուայ մէջ ծախսերը հանելուց յետոյ, գոնէ 6000 ր. պէտք է ուելացած լինէր, մնում են փչաքաղված, երբ տեսնում են որ Ս. վարդապետը պարտք էլ է ցոյց տալիս։ Այսպիսի դէպքում, եթէ մարդիկ լռեն, քարերը կը բողոքեն Ս. վարդապետի անիրաւութեան դէմ։ Հօռոմոսի վանքը ունի 1500 օրավար հող, որից եթէ միայն խոտ հնձեն, ամենաերաշտ տարին դարձեալ մի օրավարում մի սայլ խոտ կը գայ, (բայց այդպիսի տարին էլ սայլը արժէ 40—50 ր.) իրաքանչիւրը սայլը էժան տարուայ հաշիւով ծախենք 5 բուբլիով, որ կանէ 1500×5=7500 ր. իսկ երեք տարում կանէ 7500×3=22,500 ր., մի 500 բուբլի էլ աւելացնենք սրա վրա ուխտաւորների նուէրները, գիւղերից հաւաքած վանքապատկան իւղերը, արմատեղէնները, կը լինի 23,000 բուբլի։ Ո՞ւր է գնացել այդ անհագին գումարը. պատասխանը յայտնի է.... Վանքի վրա ոչ մի կոպէկի չինութիւն չէ եղել։ Մի լուսարար կայ 10 տարի է, արքայութիւն գնալու համար, ձրի ծառայում է վանքին։ Մի վարդապետ կայ, 3 օր հաց չը տաս, չի ասի առած եմ. մի մշակ ունի վանքը, որի տարեկան ծախսը 100 ր. չի անցնի, մէկն էլ ինքը Ս. վարդապետն է, որին թող իրաւունք տանք տարեկան 2 հազար ր. մսխելու իրա համար։ Ասել է վանքը ունի չորս միաբաններ, որոնց համար ես տարեկան ծախս պիտի նշանակեմ, մեզանից բաց. 500-ական բուբլի (բայց 500 կօպ. մսխվի,) որ երեք տարում կանէ 6000 դուրս գալով 23,000 բուբլուց—կը մնայ դարձեալ 17000 ր.։ Վերջապէս չերկարացնենք. թող բոլորը ծախսվէր, 6000 ր. էլ եա մնար— Ս. վարդապետը իր ձեռքի տակ գտնված եկամուտներով չը բաւականալով, սկսեց յանուն չինութեան մայր եկեղեցւոյն Անուշ Ժողովարարութիւն անել և փողերը նպատակին չը ծառայեցնել։ Այս մասին Սինոդը դարձեալ քննիչ է ուղարկում Ալէքսանդրապօլու Մ. քահ. Տէր-Պողոսեանցին, որը նոյնպէս գտնելով հազար ու մի տեսակ զեղծումներ, գրաւոր կերպով իր քննութիւնը տալիս է Սինոդին։—Ս. վարդապետը, երկնչելով իր ապագայ ծանր պատասխանատուութիւնից, կոտրում է վանքի գանձանակը, գրպանի կիսատն էլ լրացնում ու անհետանում։ Մի քանի ամիս ոչ ոք չէր իմանում նրա տեղը, մինչև որ Կարնոյ և Մշու առաջնորդների նամակները լուր բերեցին թէ, Ս. վարդապետը այն կողմերը յանուն չինութեան մայր եկեղեցւոյն Անուշ Ժողովարարութիւն է անում։

Հօռոմոսի մենաստանը Ս. վարդապետի վանահայրութեան տակ այնպիսի քարուքանդ դրութեան մէջ էր, որ տեսնող չէր կարող առանց զայրոյթի հեռանալ։ Քանդված պարիսպներից գիւղի նախիրը ներս խուժելով, բոլոր սրբութիւնները ապականել, ախոր էին դարձրել։ Թագաւորաց գիւանատան մէջ (իմ աչքերովս եմ տեսել) Ս. վարդապետի նժոյգի խոտ ու դարմանն էր հաւաքած, մի կողմն էլ արաղ դարսած.....

Ս. վարդապետի փախչելուց յետոյ, Գ. եպ. Աղուանեանցը սկսում է բարեկարգել վանքը, քանդված պարիսպները շինել, վանքի եկ ու ելքը կարգի դնել։ Վանքի համար շինում է ջրաղաց և մի տարում 2 հազար բուբլի էլ աւելացնում և Սինոդին 80 թուի հոկտեմբերի 2-ին № 26 նամակով այս մասին իմաց տալիս որ վանքում այդ եկամուտով մի ժառանգաւորաց դպրոց բաց անի Շիրակայ գիւղերի համար քահանայացուներ և վարժապետացուներ պատրաստելու համար։ Մի և նոյն ժամանակ սրբազան հայրը ձեռնարկում է Անուշ մայր եկեղեցու շինութեան։—Մինչդեռ հայր Աղուանեանցը չարչարվում էր այդ վանքը իր անկեալ դրութիւնից վերականգնել, յանկարծ լուր ենք ստանում, որ Ս. վարդապետը Մշու կողմերից վերադարձել է ս. Էջմիածին և իր լիքը զրպանները այդ տեղ դատարկել է, ամենքին էլ հիւրասիրել է, ամենքին էլ պատուել, ամենքից էլ ներողութիւն խնդրել, դառնապէս զղջացել և այդպիսի գեղեցիկ միջոցներով ամեն խաթաբալից խոպառ սրբվել ու անմահական հրեշտակ դառել։ Էջմիածինը ամենայն ուրախութեամբ այդ վարդապետի անցած մեղքերը փոփուճի տակը դնելով, 80 թվի վերջերում լիազօր իրաւունքով կրկին ուղարկում է Շիրակ, տալով նրան միանգամայն Հօռոմոսի վանքի վանահայրութիւնը, 34 գիւղերի անկախ գործակալութիւնը և այդ վիճակում գտնված բոլոր վանքերի տեսչութիւնը և Սինոդը գրաւոր կերպով դեկտեմբերի 27-ին № 507 յայտնում Ղարսի առաջնորդին իր անօրէնութիւնները, որպէս զի վերջինս իրաւունք չունենայ Ս. վարդապետի ոչ մի գործունէութեանց վրա։—Ինչպէս ականջներիս հասնում է, Ս. վարդապետը խոստացել է տարեկան 4 հազար բուբլի ուղարկել Էջմիածին և դրա համար էլ սինոդը այդ բոլոր գիւղերը հանել է Գ. եպս. Աղուանեանցի իրաւունքի տակից և յանձնել է Ս. վարդապետին։ «Նա գիտար, բաղդան գիդար, բաղդանչիդան նա գիդար» ասում է Թուրքի առածը. ինչ կը գնայ, Հօռոմոսի վանքից և վիճակից կը գնայ, Ս. վարդապետից ինչ կը գնայ։—Ս. վարդապետը այժմ իր պաշտօնը վարում է առանց բանի տեղ դնելու Ղարսի առաջնորդին։ Ինկատի առնելով իր քամակում կանգնած Սինոդի պէս հզօր պաշտպան, կատարեալ առաջնորդական իրաւունքներ է բանեցնում, սարսափ է գըցում իր ստորադրեալ քահանաների վրա։ Շիրակայ ժողովուրդը՝ ընդդէմ լինելով Սինոդի այս կարգադրութեան, մի հանրագրութեամբ բողոքել է, բայց Սինոդը ըստ իր սովորութեան ժողովրդի արդար բողոքի մասին ձայն չէ հանում։—Ահա այսպէս է մխիթարում սուրբ Էջմիածինը նամակիս առաջին տողերում նկարագրած թշուառ ժողովրդին։ Վընաս չունի, թող Էջմիածինը վիճակների արդիւնքներով ճոխանայ, թող ճեմարանը փառաւորվի և պճնվի, իսկ գիւղերում հազարաւոր մանուկներ զոհ գնան տգիտութեան, հարիւրաւոր գիւղերի մէջ մի ծխական դպրոց էլ չը լինի։—Մենք մնացել ենք զարմացած թէ Էջմիածինը ինչու խլում է Ղարսի առաջնորդի իրաւունքները և յանձնում է մի գռեհիկ և տգէտ վարդապետի։ Ինչու Էջմիածինը այդքան սառն է մոռիկ տալիս Ղարսի առաջնորդին։ Ինչու Էջմիածինը թշնամութիւն է դնում Ղարսի առաջնորդի և Ս. վարդապետի մէջ։ Ինչու Էջմիածինը գոնէ չը նշանակեց այդ վիճակում այնպիսի մի մարդ, որ իր կենդանի քարոզներով, հայրական յորդորներով կարողանար ժողովրդի մէջ ուսումնասիրութեան սերմ ցանել։

Հոգը, մոխիրը այն ազգի գլխին, որի կառավարիչը Ս. վարդապետն է։ Անշունչ առարկաներն էլ վկայում են որ Ղարսի առաջնորդը անտանման բարձր է Ս. վարդապետից, թէ զարգացմամբ, թէ ուսումնասիրութեամբ, թէ արդիւնաբերութեամբ, և վերջապէս ամեն բանով։ Բայց Էջմիածինը չէ կամենում այդ ամենապարզ ճըշմարտութեանը հաւատալ։

Թող, ուրեմն, կոյրը կոյրին առաջնորդէ և բոլորը միասին թափվին անդառնալի անդունդը։

Շիրակեցի

ՆԱՄԱԿ ԲԱՇ-ՇՈՐԱԳԱԼԻՑ

—

Մայիսի 10-ին

Կարսի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանց մարտ ամսից մի քանի օր առաջ կանչված էր Էջմիածին։ Բայց ինչու համար, արդեօք Էջմիածինը կամենում էր պատուել յիշեալ եպիսկոպոսին, որ իր անխոնջ գործունէութեան և ճշմարիտ հայրենասիրութեան շնորհիւ Կարսի նոր նուաճած և ուսումից յետ մնացած համարեայ բոլոր գիւղերի մէջ բաց էր արել ծխական դպրոցներ, և աշխատում էր ընդհանրացնել ուսումն։ Ոչ, դրա համար չէր, այլ հարցնելու թէ, մինչև հիմայ ինչու պէտք է Էջմիածինը զրկված լինէր այն 4,000 բուբլուց, որը արդէն խոստացել էր նրան Ստեփան վարդապետ Շիրակունին, իւրաքանչիւր տարի վճարել նոր նուաճած Շիրակայ 34 գիւղերից։ Մենք համարձակ կարող ենք ասել, որ այդպիսի մի մեծ գումար մինչև յայսօր արտադրված չէ եղել, ոչ թէ միայն այդ 34 անունն գիւղերից, բայց և Ղազախի կալուածքներից էլ միասին։ Իսկ Ստեփան վարդապետը յանձն է առել այդ գումարը իր նախկին վանահայրութեան միջոցին գործած յանցանքները ծածկելու և իր նախկին վանահայրութեան իրաւունքը վերստին ձեռք բերելու նպատակաւ։ Բայց թէ յիշեալ վարդապետը ինչ էր անում այդ գումարը, ինչի վրա էր գործադնում իր նախկին վանահայրութեան ժամանակը,—այդ չը գիտենք։

Որովհետև Աղուանեանցը վազուց կազմել էր մի նախագիծ, Շիրակայ գիւղերում մի կենտրոնական դպրոց բանալու համար, այդ պատճառով չտապում էր ուարտել Ղազախի ջրաղացի շինութիւնը, որը պատրաստում էր իբրև միակ և գլխաւոր աղբիւրը դպրոցի համար և հազիւ թէ դա ուարտել էր և կամենում էր ձեռնարկել դպրոցը, յանկարծ մի քանի նախանձաոիրտ և յայտնի թշնամիները համոզվելով, որ դա մեծ առաւելութիւն կարող է տալ գործող անձին, իսկոյն չտապեցին աջակցել Ս. վարդապետին այդպիսի մի մեքենայ կազմելու համար, որով ըստ երևոյթին յաջողացրին խափանելու այդ միտքը։ Դրանք ովքեր են. մենք յանուանէ անուն չենք կարող տալ, քանի որ Ալէքսանդրապօլը լաւ է ճանաչում նրանց և գիտէ, թէ մէկին և թէ միւսին.... Վերջապէս Գրիգորիս եպ. Աղուանեանցը որքան աշխատել էր, դարձեալ չէր կարողացել Էջմիածնին հաշտեցնել իր մտքի հետ. ուստի այն տեղից անբաւական յետ դարձած, մինչև յայժմ սպասում է սուրբ Սինոդի տնօրէնութեանը։ Ինչպէս պէտք է անօրինել ս. Սինոդը. նա պէտք է ձեռք վերցնէ արդեօք այդ նընանաւոր գումարից, պէտք է յիշէ արդեօք Շիրակայ հազարաւոր մանուկների ուսման կարիքը։ Նա արդեօք աւելի օրինաւոր պիտի համարի Գրիգորիսի միտքը, քան թէ Ստեփանինը, այդ դեռ ես յայտնի չէ, բայց այսքանը գիտենք, որ Մանկունին, Էջմիածնի այդ գլխաւոր դերախաղը, սաստիկ պաշտպան է Ստեփանին։

Շիրակայ յիշեալ 34 գիւղից մարտ ամսի մէջ մի հանրագիր ուղարկվեցաւ Վեհափառին, խնդրելով չառնել այդ մի կտոր հացը բաղամթիւ սոված մանուկների բերանից, այլ մի և նոյն վիճակի մէջ գործ դնել նրանց կրթութեան և լուսաւորութեան համար. ժողովուրդը մնծայցյս է իր հանրագրի վրա Վեհափառի ուշադրութեան կոչմանէ։

Գիւղացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ գրում են ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ, որ Թիֆլիսի տէր Սարգիս աւագ քահանայ Աղաջանանցը վերադառնում է Էջմիածնից և իր հետ բերում է բաւական մեծ քանակութեամբ խաչեր և կամիլաֆկաներ Թիֆլիսի քահանաներին բաժանելու համար։

—

Հռչակաւոր Ամբրոսիոս վարդապետը, որ մի